

ՊՕԶՆԱՆԻ ՌԻՍՈՒՑԶԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

(Հեճուիկ Սեճկեւիչի)

... Լամպի, թէն մի փոքր միջնացրած, լոյսը զարթեցնում էր ինձ և յաճախ ժամի երկուսին կամ երեքին կէս գիշերից անց տեսնում էի Միխայիլի դեռ աշխատելիս: Նրա փոքրիկ և ուժասպառ կերպարանքը, միայն ճերմակեղէնը հագին, կոացած էր լինում գրքի վրայ, իսկ գիշերային խաղաղութեան մէջ քնատար ու տանջուած ձայնը մեքենայաբար կրկնում էր լատինական կամ յունական խոնարհումները նոյն միակերպութեամբ, որով և կեղեցում կրկնում են «Տէր ողորմեա»-ի բառերը: Եւ երբ կանչում էի նրան, որ գնայ քնի, տղան պատասխանում էր ինձ. «Դեռ դասը չը գիտեմ, պան Վալրժինկիչ»: Պատրաստած էի լինում սակայն նրա հետ դասերը ժամի չորսից մինչև ութը, իսկ յետոյ ժամի իննից մինչև տասնեակուսը, և ինքս չէի մտնում անկողին, առաջ քան համոզուէի, որ ամենը գիտէ. բայց ճշմարիտ՝ այս ամենը շատ շատ էր: Աւարտելով վերջին դասը, տղան մոռանում էր առաջինը, իսկ յունական, լատինական, գերմանական խոնարհումներն ու զանազան տեղերի անունները այնպիսի խառնչիթթութեան մէջ էին ձգում նրա խեղճ գլուխը, որ քնել չէր կարողանում: Դուրս էր պրծնում այն ժամանակ վերմակի տակից, վառում էր լամպը և նստում նորից սեղանի առջև: Երբ նրան սաստում էի, խնդրում էր և արտասուում: Յետոյ այն աստիճան ընտելացայ այս գիշերներով նստելուն, լամպի փայլին և խոնարհումների միթմրթոցին, որ երբ սրանք չէին լինում, ինքս քնել չէի կարողանում: Դուցէ ես պէտք է թոյլ չը տայի, որ երեխան չարչարուէր ուժից վեր, բայց ինչ պիտի անէի: Զէ որ պէտք է ամեն օր այսպէս թէ այնպէս դասերը սովորէր, որովհետև հակառակ դէպքում նրան զպոլոցից կը հեռացնէին, և Աստուած միայն գիտէ, թէ որպիսի հարուած կը լինէր այս բանը պանի Մարիայի համար, որ ամուսնու վախճանելուց յետոյ մնալով երկու որբուկները ձեռին՝ բոլոր յոյսը դրել էր Միխայիլ վրայ: Դրութիւնս ճշմարիտ որ անկանե-

լի էր, որովհետև միւս կողմից տեսնում էի, որ մտաւոր չափազանց լարումը խորտակում է տղայի առողջութիւնը և կարող է վտանգաւոր լինել նրա կեանքի համար: Հարկաւոր էր գոնէ նրան ֆիզիքապէս աւերապնդել, մարմնամարդութեամբ զարգացնել, ստիպել երկար զբօսանել կամ ձի հեծնել, բայց ժամանակ չը կար այս բաների համար: Երեխան ափսոսաւ աշխատութիւն ունէր, ափսոսանքն անգիր սերտելու, որ ձեռքը խղճին ասում եմ՝ ժամանակ չը կար: Տղայի ուրախութեան, առողջութեան և կեանքի համար հարկաւոր աշխատութիւն չուէր և լատիններէն, յունարէնը և... գերմաներէնը: Առաւօտները, երբ նրա գրքերը դարսում էի պայուսակի մէջ և երբ տեսնում էի, ինչպէս նրա նիհար ուսերը ծուռում էին այն բնականաբան հատորների ծանրութեան տակ, սիրտս ուղղակի ճնշւում էր: Երբեմն խնդրում էի, որ ներդաշնակ ու զիջող լինեն նրա նկատմամբ, սակայն գերմանացի ուսուցիչները ինձ միայն պատասխանում էին, որ երկխոսի փչացնում եմ և երես եմ տալիս, որ Միխայիլ երեւ բաւական չէ աշխատում և «լռում է» չնչին առիթով: Ինքս էլ կրճաքցաւ ունեմ, մննակ մարդ եմ և դիւրագրգիռ, ուստի այս յանդիմանութիւնները քանի-քանի վայրկեաններս են թունաւորել: Ամենքից աւելի ես գիտէի, արդեօք Միխայիլ բաւականի չէ աշխատում: Նա մի միջին ընդունակութիւնների տէր երեխայ էր, բայց մի աշխարհի սնկսոնջ և, ամեն քաղցրութեամբ հանդերձ, կամքի աշխարհի ուժով օժտուած, ճրպիսին առիթ չէմ ունեցել պատահելու ոչ մի ուրիշ տղայի մէջ: Խեղճ Միխայիլ բուն և կոյր կերպով պաշտում էր իր մօրը, և որովհետև նրան ասել էին, որ մայրը սաստիկ դժբախտ է, տկար է և որ եթէ ինքն էլ գեռ վատ սովորի, կարող է նրան սպանել, ուստի տղան դողում էր այս մտքից ու ամբողջ գիշերներ նստում էր գրքերի վրայ, միայն թէ մայրիկին չը վշտացնէ: Աշխուղորմ լաց էր լինում, երբ վատ թուանշաններ էր ստանում, բայց ոչ որի գլխով չէր անցնում, թէ ինչու էր լաց լինում և թէ որչափ սարսափելի պատասխանատւութիւն էր զգում նա այդպիսի վայրկեաններում: Վա, ռեմ ինչ դորձ: Ես նրան չէի փչացնում, ոչ էլ երես էի տալիս, միայն թէ ուրիշներից լաւ էի հատկանում նրան և եթէ, փոխարէն յանդիմանելու նրան անաջողութիւնների համար, աշխատում էի մխիթարել, այդ արգէն իմ բանն է: Ինքս քիչ չեմ աշխատել, չարաբուռել կեանքիս մէջ, տեսել քաղցածութիւն և սև օր, բախտաւոր չեմ եղել, չեմ լինի բախտաւոր և—Գրողը տոնի—մինչև անգամ արգէն ատամներս էլ չեմ սեղմում, երբ այս բանի մասին մտածում եմ. չեմ հա-

ւատում, որ արժ լինի ապրել, բայց գուցէ այս պատճառով ճշմարիտ կարեկցութիւն եմ զգում դէպի ամեն տառապողը:

Ես գոնէ Միխայի հասակում, երբ վազվզում էի փողոցներում աղանձինքի կտելից կամ վէզ էի խաղում քաղաքային տան առջև, ունեցել եմ ուրախութեան և առողջութեան լիժամերը: Հազը ինձ չէր տանջում. երբ ճանկն էի ընկնում, լաց էի լինում, քանի որ ձեռքում էին. իսկ ընդհանրապէս ծախ պէս ազատ եմ եղել և ոչ մի հոգս չեմ ունեցել: Միխայի նոյն իսկ այդ չունէր: Կեանքը նրան էլ կը դնէր զնդանի վրայ ու կը ձեռէր մուրճով. սակայն այնքան զոնէ չահած կը լինէր, որքան երկիւստ հասակում սրտանց ծիծաղած այն բանի վրայ, ինչ որ մանուկներին զուարճանում է, գժու թիւններ արած կը լինէր ու վազվզած բաց օդում արեւի ճառագայթների մէջ: Բայց այսպիսի միաւերում աշխատանքի ու մանկութեան՝ չունէի աչքիս առջև: Ընդհակառակը. տեսնում էի ինչպէս երեխան գնում էր ուսումնարան և վերադառնում աշխտեղից դէպք խոփոտած, զրբքերի ծանրութիւնից կռացած, ուժասպառ, խորշմները աչքերի անկիւններում, շարունակ կարծես լացի բոկումը զսպած, ուստի կարեկցում էի նրան ու ուզում էի նրա համար ապաւէն լինել:

Ինքս վարժապետ եմ, թէև մասնաւոր, և չը գիտեմ, ինչ պիտի անէի աշխարհիս երեսին, եթէ դեռ հաւատաւ էլ կորցրած լինէի դէպի ուսման արժէքն ու այն օգտակարութիւնը, որ նրանից առաջ է գալիս: Սակայն ուղղակի կարծում եմ, որ ուսումը չը պէտք է ողբերգութիւն լինի մանուկների համար, որ լատիններէնը չէ կարող նրանց առողջութեան անդը բռնել, իսկ լաւ կամ վատ արտաւանդութիւնը չը պէտք է փոքրիկ էակների ճակատագրի ու կեանքի խնդիրը վճռի:

Կարծում եմ նոյնպէս, որ մանկավարժութիւնն աւելի լաւ է իրագործում իր նպատակը, երբ երեխան զգում է՝ իրան քաղցրութեամբ առաջնորդող ձեռքը, ոչ թէ իր կուրծքը ճնշող ու այն ամենը կոխտոտող ոտը, ինչ որ սովորել է պաշտել ու սիրել տանը... Մի այնպիսի խաւարամիտ մէկն եմ, որ երեւի չեմ փոփոխիլ արդէն իմ համոզմունքս այս բանի մասին, որովհետեւ աւելի ու աւելի ամրապնդւում եմ նրա մէջ, քանի յիշում եմ իմ Միխային, որին այնպէս անկեղծօրէն սիրում էի: Վեց տարի էր որ նրա ուսուցիչն էի, սկզբում որպէս դաստիարակ, յետոյ, երբ մտաւ երկրորդ դասարան, որպէս դասերը հետ կրկնող (ռեպետիտօր), ուրեմն ժամանակ ունէի նրան սիրելու: Վերջապէս, ինչու պիտի ծածկեմ ինքս ինձնից. ինձ համար թանկագին էր իբրև ինձ համար ամենաթանկագին էակի

որդի: Երբէք նրա մայրը չը գիտէր այս բանի մասին և երբէք չի գետննալ: Յիշում եմ, որ ես... մի ինչ որ պան վալրժինկինչ եմ, մասնաւոր վարժապետ, այն էլ տկար մարդ, իսկ նա՝ հարուստ ազնուական տան աղջիկ, մի խօսքով պանի (տիկին), որի վրայ չէի համարձակուիլ աչք բարձրացնել: Բայց որովհետեւ կեանքից մաշուած մենակ սիրտը վերջապէս պէտք է մի բանին կաշի, ինչպէս մի բանի է կաշուած ալիքով օրօրուող խնցին, ուստի իմ սիրտը նրան է յարել: Ի՞նչ ա՜նամ. և վերջապէս ի՞նչ է այս նրան վնասում: Չեմ ուզում ներանից աւելի լոյս, քան թէ արեւից, որ զարուհիքին իմ տկար կուրծքն է տաքացնում: Վեց տարի նրա տան մէջն եմ եղել, ներկայ եմ եղել նրա ամուսնու մահուան բոպէին, տեսել եմ նրան դժբախտ ժամանակ մենակ, բայց միշտ հրեշտակի պէս, բարի, զաւակասէր, գրեթէ սուրբ՝ իր որբեայրութեան մէջ ուստի պէտք է այս տեղը հասնէր: Բայց սա սէր չէ իմ մէջ, սա աւելի շուտ իմ հաւատն է:

Միխասը շատ յիշեցնում էր մօրը: Յաճախ, երբ աչքերն ինձ վրայ էր բարձրացնում, թուում էր ինձ թէ նայում եմ մօր վրայ: Հէնց նոյն նուրբ գիմագծերն էին, նոյն ճակատը՝ խիտ մաղբից ընկնող ստուերով, հէնց նոյն յօնքի մեղմ նկարը, և մանաւանդ գրեթէ միատեսակ ձայնը: Մօր ու որդու տրամադրութեան մէջ նոյնպէս կար մի ընդհանուր բան, մի որոշ հակում գէպի՝ զղացմունքների ու հայեացքների անզուսպ զրգռում: Երկուսն էլ այն տեսակ նեարդային, գիւրագգաց, ազնիւ ու սիրող էակների շարքին էին պատկանում, որոնք ընդունակ են ամենամեծ անձնութիւնների, բայց որոնք քիչ բախտաւորութիւն են գտնում կեանքի ու նրա իրականութեան հետ ընդհարուելիս, առաջուց տալով աւելի, քան թէ կարող են ստանալ: Այս տեսակ մարդիկ անհետանում են այժմ, և կարծում եմ, որ մի որ և է այսօրուայ ընագէտը կարող էր ասել նրանց մասին, որ այս դիւից մահուան են դատապարտուած, որովհետեւ աշխարհ են գալիս սրտի արատով—չափազանց սիրում են:

Միխասի ընտանիքը մի ժամանակ շատ ունեւոր էր, բայց—չափազանց սիրում էին... ուստի զանազան փոթորիկները ցիր ցան արին կարողութիւնը, իսկ այն, ինչ որ մնացել էր, ուղիղ է կարիք չէ, չէ նոյն իսկ աղքատութիւն, սակայն նախկին ժամանակների հետ համեմատած մի չափաւորութիւն՝ է, Միխասը վերջինն էր տոհմի մէջ, և սրա համար էր, որ պանի Մարիան սիրում էր նրան ոչ միայն իբրեւ իւր հարազատ զաւակի, այլ և միաժամանակ իբրեւ ապագայի իր ամբողջ յոյսը, դժբախտաբար, մայրերին յատուկ կուրուքեամբ նկատում էր նրա մէջ արտասու-

վոր ընդունակութիւններ: Տղան ուղիղ որ բխամիտ չէր, սակայն այն տեսակ երեխաներիցն էր, որոնց ընդունակութիւնները, սկզբում միջակ, զարգանում են միայն մի քիչ ուշ, ֆիզիքական ոյժերի և առողջութեան հետ միասին: Ուրիշ հանգամանքների մէջ նա կը կարողանար դպրոցն ու համալսարանը աւարտել և օգտակար աշխատաւոր դառնալ ամեն ասպարէզի վրայ: Բայց այն հանգամանքների մէջ, որոնք գոյութիւն ունէին, միայն չարհարւում էր և՛ լաւ իմանալով թէ ինչ բարձր գաղափար ունէր մայրը իր ընդունակութիւնների մասին, իզուր կարում էր ուժերը:

Շատ բան են տեսել իմ աչքերը աշխարհիս երեսին, և վճռել եմ ոչնչի վրայ չը զարմանալ, բայց խոստովանւում եմ, դժուարութեամբ հաւատացի, թէ կարող է գոյութիւն ունենալ մի այնպիսի խառնաշփոթ մթնոլորտ, ուր երեխային չարիքի հասցնէր հաստատամտութիւնը, կամքի ոյժն ու աշխատասիրութիւնը: Մի ինչ-որ անառողջ բան կայ այս բանի մէջ և եթէ խօսքերը կարողանային սփռել իմ կակիծն ու դառնութիւնը, ես ճշմարիտ՝ կ'ասէի Համլետի հետ միասին, որ աշխարհիս երեսին կատարւում են բաներ, որ փիլիսոփաները երազումն էլ չեն տեսել...

Աշխատում էի Միխայիլ հետ, կարծես այն թուանշաններից, որ նա էր ստանում առաջագիմութեան համար, իմ սեփական ապագան էր կախուած, որովհետեւ երկուսս էլ՝ ես ու իմ անգլին տղաս, ունէինք մի նպատակ, այն է՝ չը կոտրել մայրիկի սիրտը, ցոյց տալ լաւ երկամտակներ, երջանկութեան ժպիտ արծարծել նրա չրթունքների վրայ: Երբ աջողւում էր լաւ թուանշան ստանալ, փոքրիկը գալիս էր ուսումնարանից փայլող աչքերով ու երջանիկ: Թւում էր ինձ, թէ այսպիսի դէպքերում նա յանկարծ մեծանում էր, թէ մէջքը ուղղւում էր. նրա՝ սովորաբար տրտում աչքերը ծիծաղում էին այն ժամանակ անկեղծ, մանկական ուրախութեամբ և պսպղում էին երկու ածուխների պէտ: Իսկոյն վայր էր նետում իր նեղ ուսերից գրքերով ծանրաբեռնուած պայուսակը և աչքերն ինձ վրայ թարթելով՝ ասում էր դեռ չէմքից.

— Պան՝ (պարոն)՝ Վալրժինկեիչ, մայրիկը գոհ կը լինի: Այսօր աշխարհագրութիւնից ստացայ... ապա իմացէ՛ք՝ որքան:

Եւ երբ ձեռնում էի թէ չեմ իմանում, մօտ էր վազում ինձ հպարտ դէմքով և, վզովս փաթաթուելով, ասում էր կարծես ականջիս, բայց շատ բարձր ձայնով.

— Հինգ, ճշմարիտ հինգ:

Երկուսիս համար դրանք երջանիկ վայրկեաններ էին: Այդ

երեկոները Միխայիլ Երազուս էր և երեկայելով իրան, թէ ինչ կը լինի, եթէ բոլոր թուանշանները գերազանց ստանայ, ապա էր կէսն ինձ դիմելով, կէսն ինքն իրան.

— Ծննդեան տօնին կ'երթանք Զալխին, ձիւն գալիս կը լինի— ձմեռուայ սովորութեան պէս— ուրեմն սահնակով կ'երթանք: Տուն կը հասնենք միջնով, բայց, ո՛, մայրիկն ինձ սպասելիս կը լինի, կը զրկի ինձ, կը համբուրի, իսկ յետոյ կը հարցնի թուանշաններս: Ես դիտմամբ դէմքս կը թթուացնեմ, իսկ մայրիկս կը կարգայ.— կրօնից գերազանց, գերմաներէնից՝ գերազանց, լատիներէնից՝ գերազանց, բոլորը գերազանց. Օ՛, պան Վալրիմիկներ:

Եւ խեղճ տղայի աչքերին արտասուքներ էին երեւում, և փոխարէն նրան զսպկու, ինքս էլ հետեւում էի նրան իմ յոգնած երեկայութեամբ և մտաբերում էի Զալխինի տունը, նրա պատկառելի խաղաղութիւնը, այն բարձրագոյն, ազնիւ էակը, որ այնտեղ տիրուէի էր, և այն երջանկութիւնը, որ նրան կ'ազդի տղայի վերադարձը գերազանց թուանշաններով:

Օգուտ էի քաղում այդ բոլէներէից և խորհուրդներ էի տալիս Միխայիլին, բացատրելով նրան, որ մայրիկի համար մեծ նշանակութիւն ունի նրա առաջագիմութիւնը ուսման մէջ, բայց նոյնպէս և առողջութիւնը, և որ ուրեմն չը պէտք է լաց լինի, երբ ևս իրան զբօսանքի եմ տանում, պէտք է քնի այնքան, որքան իրան ասում եմ, և յամառութեամբ չը նստի գիշերներով: Սրտաշարժուած տղան զրկում էր իմ վիզս ու կրկնում.

— Շատ լաւ, իմ անդին պան, այնպէս, այնպէս առողջ կը լինեմ որ... և կը դառնամ այնպէս մեծ, որ ոչ մայրիկը, ոչ էլ փոքրիկ Լօլեան ինձ չեն ճանաչիլ:

Ստանում էի նաև յաճախ նամակներ պանի Մարիայից, որոնք պատուիրում էին ինձ, որ խնամք տանեմ երեխայի առողջութեանը, բայց յուսահատութեամբ ամեն օր համոզում էի, որ հաշտեցնել ուսումը առողջութեան հետ ձիւտ որ անհնարին էր: Եթէ աւանդած առարկաները դժուար լինէին, ևս մի ճար կը գտնէի, տեղափոխելով Միխայիլի երկրորդ դասարանից առաջինը, սակայն նա այդ՝ թէև անպէտք առարկաները չատ լաւ էր հասկանում, ուրեմն ցաւը ուսումը չէր, ցաւը միայն ժամանակն էր և այն դժբախտ գերմանական լեզուն, որին երկխոսն չէր տիրապետում բաւականաչափ: Այս բանի ճարն արդէն ոչ մի կերպ չէի կարող գտնել և միայն յոյս ունէի, որ երբ կը հասնեն տօները, հանգստութիւնը կը լրացնի տղայի առողջութեան այն պակասորդները, որոնք առաջ էին եկել չափազանց աշխատելուց:

Եթէ Միխայիլ լինէր աւելի անտարբեր երեխայ, աւելի քիչ կ'անհանգստանայի նրա համար, բայց նա իսկապէս աւելի եւս սաստիկ էր զգում ամեն անաջողութիւն, քան թէ աջողութիւնները։ Ուրախութեան և այն ճիւղերի վայրկեանները, որոնց մասին յիշեցի, սակաւադէպ էին, դժբախտաբար։

Այնպէս սովորել էի նրա դէմքից կարդալ, որ հէնց որ ներս էր մտնում, առաջին հէնց հայեացքից հասկանում էի, երբ աջողութիւն ունեցած չէր լինում։

—Վատ թուանշան ես ստացել, հարցնում էի։

—Այո։

—Չը գիտէիր։

Երբեմն պատասխանում էր.

—Չը գիտէի.—բայց աւելի յաճախ.—Գիտէի, բայց չէի կարող բացատրել։

Եւ փոքրիկ Ուիլիսին, երկրորդ դասարանի առաջին աշակերտը, որին դիտմամբ հրաւիրել էի, որպէսզի Միխայիլ հետ միասին պարապի, ասում էր, որ Միխայիլ գլխաւորապէս նրա համար է վատ թուանշաններ ստանում, որ չի կարողանում... միտքն արտայայտել։

Քանի աւելի էր երեխան իրան յոգնած զգում մտքով և մարմնով, այնքան անաջողութիւնները աւելի յաճախ էին կրկնուում։ Նկատել էի, որ երբ կուշտ լաց լինելուց յետոյ նստում էր այնուհետեւ դասեր սերտելու, հանդարտ էր լինում և կարծեա հանգիստ, բայց այն կրկնապատկուած եռանդի մէջ, որով ձեռնամուխ էր լինում դասերին, մի ինչ որ յուսահատական և միաժամանակ տենդային բան էր լինում։ Երբեմն էլ գնում էր անկիւնը, երկու ձեռներով սեղմում էր գլուխը և լուռ մընում. գրգռուած երեակայութեան տէր տղան երեակայում էր, թէ գերեզման է փորում սիրած մօր ոտների տակ, և չէր իմանում, ինչ ճար անէ իր գլխին, և ուղղակի մի պտտուող անուրի մէջ էր զգում իրան, որից ելք չը կար։

Նրա գիշերով նստելը դառնում էր աւելի ու աւելի յաճախակի։ Վախենալով, չը լինի թէ զարթնելով հրամայեմ նրան գնալ ու քնել, վեր էր կենում կամացուկ, մթութեան մէջ, դուրս էր տանում լամպը նախասենեակը, այնտեղ վառում էր ու նստում աշխատելու։ Առաջ քան եւս նրան բռնեցի, մի քանի գիշեր անց էր կացրել այս կերպով չը վառած չորս պատի մէջ։ Ոչ մի ուրիշ հնար չունէի, բացի այն, որ վեր կենայի, ներս կ'անչէի նրան սենեակը և հետը նորից աչքի անցնէի բոլոր դասերը նրան. համոզելու համար, թէ բոլորը գիտէր և թէ զուր իրան ենթարկում էր մրսելու վտանգին։ Բայց նա

արդէն ինքը վերջ ի վերջոյ չէր խմանում, ինչ գիտէր և ինչ չը գիտէր։ Երեխայի ոյժերն սպառւում էին, ներհարում էր, դեղնում։ Երբեմն այնպիսի մի բան էր պատահում, որ ինձ համոզում էր, թէ սակայն ինքը աշխատանքը չէր որ ծծում էր նրա ոյժերը։ Մի անգամ, երբ աւանդում էի նրան ազգային պատմութիւնը, քր «Պապը իր թոռներին է պատմեց» — մի բան, որ ամեն օր անում էի պանի Մարիայի պատուէրով — Միխայիլ վեր թռաւ ցոլացող աչքերով, իսկ ես գրեթէ սարսափեցի, անհետիւյ նրա դէմքի քննող և մալլ արտայատութիւնը, որով գոչեց.

— Պան, ուրեմն այդ ճշմարիտ որ հեքեաթ էջ, որովհետեւ...

— Որովհետեւ ինչ, Միխայիլ, — հարցնում էի ես ապառաժ։

Պատասխանելու փոխարէն, ատամները սեղմեց, իսկ վերջը այնպիսի բռնն լացով լացեց, որ երկար չէի կարողանում նրան հանգստացնել։

Հարցրի Ուիլցկուց այս բռնկման պատճառը. չէր կարող, կամ չէր ուզում ասել. հասկացայ սակայն ինքն։ Ոչ մի կասկած չը կար, որ լեհացի երեխային պատահում էր լսել գերմանական դպրոցում շատ բան, որ խոցոտում էր նրա զգացմունքները։ Այսպիսի խօսքեր ուրիշ տղաների մէկ ականջից մտնում էին, միւսից դուրս գալիս, ոչ մի հետք չը թողնելով բացի դժկամակութիւնից դէպի ուսուցիչը և նրա ամբողջ ցեղը, բայց Միխայիլ պէս դիւրազգաց տղան հիւանդագին զգում էր այդ խօսքերը, բայց չէր համարձակւում հակաճառել։ Երկու ոյժեր, երկու ձայներ, որոնց լսելը երեխայի պարտականութիւնն է, բայց որոնք հէնց այս պատճառով պէտք է իրար հետ հաշտ լինեն, քաշում էին Միխայիլին երկու հակառակ կողմեր։ Ինչ որ մէկ ոյժը անուանում էր սպիտակ, առաքինի, սիրելի, միւսը արատաւորում էր բորոտալի և ծիծաղաշարժ կոչումով, ինչ որ մէկը առաքինութիւն էր անուանում, միւսը՝ յանցանք։ Եւ այս երկպառակութեան մէջ երեխան գնում էր այն ոյժի ետեւից, դէպի որը քաշում էր նրան սիրտը, բայց պէտք է ձեռնար, թէ լսում է ու սրտի մէջ է պահում հակառակ խօսքերը, պէտք է ձեռնար առաւօտից մինչեւ երեկոյ և ապրէր այս տաժանելի բնազդբոսութեան մէջ օրեք, շաբաթներ, ամիսներ... Այս ինչ դրութիւն է... երեխայի համար։

Տարօրինակ էր Միխայիլ ձակատագիրը։ Կեանքի ողբերգութիւնները սովորաբար սկսւում են աւելի ուշ, երբ առաջին տերեւները թափւում են երիտասարդութեան ծառից. — իսկ նրա համար այն օրերն էին, ինչ որ անբախտութիւն է կազմում — բարոյական բռնութիւն, քողարկուած դառնութիւն, անհանգստութիւն, զուր ճիգեր, մարտնչում դժուարութիւնների դէմ, յոյսի

աստիճանաբար խորտակում,—այս ամենը սկսուել էր կեանքի տասնութէկամեայ հասակում: Ոչ նրա քամած կերպարանքը, ոչ նրա քամած ուժերը չէին կարող տանել այսպիսի ծանրութեան: Անցնում էին օրեր, շաբաթներ, խեղճը կրկնապատկում էր ճիգերը, իսկ արդիւնքը օրէջ օր աւելի փոքր էր լինում, աւելի ևս ողորմելի: Պանի Մարիայի՝ թէև քնքոյշ նամակները աւելի ևս ծանրացնում էին այս բեռը:

Աստուած քեզ օժտել է, Միխայիլ, արտասովոր ընդունակութիւններով—գրում էր մայրը.—ուստի յոյս ունիմ, որ չես խաբւի այն յոյսերը, որ քեզ վրայ եմ դրել, և որ մխիթարանք կը դառնաս մեր երկրի ու ինձ համար»:

Երբ տղան առաջին անգամ ստացաւ այսպիսի մի նամակ, բռնեց ցնցողաբար իմ ձեռները և, պատրաստուելով լաց լինել՝ սկսեց կրկնել.

—Ի՞նչ անեմ, պան Վալերիինկիչ. ի՞նչ կարող եմ անել:

Իրաւ որ՝ ի՞նչ կարող էր անել. ի՞նչ ելք կարող էր գտնել, քանի որ չէր եկել այս աշխարհ բնատուր լեզուագիտական ընդունակութիւններով և քանի որ չը գիտէր արտայայտել իր մտքերը գերմաներէն: *)

Հասաւ Ամենայն Սրբոց տօներին **) ժամանակը, երկամսեակի թուանշանները բոլորովին մի բան չէին. երեք ամենակարևոր առարկաներից ունէր չափաւոր: Նրա ամենախիստ աղաչանքներին ու պազատանքներին զիջանելով, չուզարկեցի պանի Մարիային:

—Իմ անգին պան,—աղերսում էր նա, ձեռները ծալելով.—մայրիկը չը գիտէ, որ Բոլոր Սուրբերի տօներին են տալիս թուանշանները, իսկ մինչև Ծնունդը գուցէ Աստուած ինձ ողորմի:

Խեղճ երեխան իրան զուր յոյսով խաբում էր, թէ այդ վատ թուանշանները կ'ուղղի, մի բան էլ ճիշտ է, ևս էլ էի ինձ խաբում: Մտածում էի, որ կ'ընտելանայ դպրոցական կարգերին, որ կ'ընտելանայ ամեն բանին, կը տիրապետի լեզուին և կ'ուղղի արտասանութիւնը, և նախ և առաջ, որ աւելի և աւելի քիչ ժամանակ կը պահանջի ուսման համար: Եթէ այս չը լինէր, վաղուց գրած կը լինէի պանի Մարիային և ներկայացրած իրերի վիճակը: Եւ իրաւ, թւում էր թէ յոյսերս զուր չէին: Իս-

*) Պօղոսեան դպրոցներում գերմաներէնն է դաստառութեան լեզուն և աւելի է պահանջում, քան թէ լեհերէնը, որ ոչնչի տեղ է դրւում և արհամարում է, որպէս և իրանք լեհացիք:

**) Նոյեմբերի մէկին:

կոյն «Ամենայն Սրբոց»-ից յետոյ Միխասը ստացաւ երեք գերազանց թուանշաններ, որոնցից մէկը լատիներէնից: Դաբատան բոլոր աշակերտներին միայն նա էր, որ գիտէր որ gaudeo բայի անցեալ ժամանակն է՝ gavisus sum, իսկ գիտէր նրա համար, որ ստանալով դրանից առաջ երկու գերազանց, հարցրել էր ինձ, ինչպէս է լատիներէն «ուրախանում եմ» կարծում էի տղան երջանկութիւնից կը ցնորուի: Գրեց մայրիկին մի նամակ, որ սկսւում էր այս խօսքերով.

«Անգին ու անուշ մայրիկ, արդեօք իմ սիրելիս գիտէ, որ gaudeo-ից կայ perfectum, ի հարկէ չը գիտէ ոչ մայրիկը, ոչ Լօլեան, որովհետեւ ամբողջ դասատան մէջ միայն ես գիտէի»:

Միխասը ուղղակի աստուածացնում էր մայրիկին: Այդ օրից ի վեր նա ամեն բոլոր հարցնում էր ինձնից զանազան perfecta (անցեալներ) և participia (բայածականներ): Ստանալ այդ գերազանցները դառաւ այժմ նրա կենքի նպատակը: Բայց այդ միայն երջանկութեան կարճատև փայլ էր: Շուտով օրհասական լեհական արտասանութիւնը քանդեց այն, ինչ որ կառուցել է աշխատասիրութիւնը, իսկ առարկաների չափազանց քանակութիւնը թոյլ չէր տալիս երեխային նուիրել նրանցից ամեն մէկին այնքան ժամանակ, որքան պահանջում էր նրա ուժասպառ յիշողութիւնը: Մի դէպք եւս նպաստեց անաշուղտութեանց աւելանալուն: Միխասն ու Ովիցկին մոռացել էին ինձ ասելու մի գրաւոր դասի մասին և չէին պատրաստել: Ովիցկին դուրս պրծաւ, որովհետեւ որպէս առաջին աշակերտ նրան նոյն իսկ չէին հարցրել արդեօք պատրաստել է թէ ոչ, իսկ Միխասը հրապարակական յանդիմանութիւն ստացաւ դպրոցում և միաժամանակ նրան սպառնացին որ կ'արձակուի:

Ակներեւ էր որ ենթադրել էին, թէ դիտմամբ է ինձանից դասը թաղցրել, որ չը պատրաստի, իսկ տղան, որ ամենաշնչին ստախոսութեան ընդունակ չէր, հնար չուներ իր անմեղութեան մէջ համոզելու: Կարող էր, ուղիղ է, իրան պաշտպանելու համար ասել որ Ովիցկին էլ էր մոռացել իր պէս, բայց այս թոյլ չէր տալիս աշակերտական պատուասիրութիւնը: Իմ հաւատացնելուն գերմանացիք պատասխանեցին նկատելով, թէ խախուսում եմ տղայի ծուլութիւնը: Այս ինձ վրայ քիչ արտնդութիւն չը նստեց, բայց աւելի մեծ անհանդստութիւն պատճառեց ինձ Միխասի տեսքը: Այդ օրը երեկոյեան նկատեցի, ինչպէս նա սեղմելով գլուխը երկու ձեռներով, չչնջում էր, կարծելով որ իրան չեմ լսում. «Ցաւում է, ցաւում է, ցաւում»: Մօր նամակը, որ ստացուեց յաջորդ առաւօտ կանուխ և որի մէջ պանի-

Մարիան քնքրոյ խօսքերով գուրգուրում էր Միխայիլն նախորդ գերազանցների համար, տղայի համար մի նոր հարուած էր:

—Ո՛հ, լաւ կը մխիթարեմ մայրիկին,—կանչում էր նա, ծածկելով դէմքը ձեռներով:

Յաջորդ օրը, երբ ուսերին ²⁰էի ձգում պայուսակը գրքերով, տարուբերուեց ու քիչ մնաց՝ ընկնէր: Ուզում էի չը թողնեմ՝ դնայ ուսումնարան, բայց ասաց, որ ոչինչ չունի. խնդրում էր միայն, որ իրան ձանապարհ ձգեմ, որովհետեւ վախեւում էր գլխի պտոյտ գալուց: Կէսօրին վերադարձաւ նոր չափաւորով: Ստացել էր մի աշնակաւ դասի համար, որ հիանալի գիտէր, բայց Ուիլցկու ասելով, դէմ էր ընկել ու չէր կարողացել խօսել: Նրա մասին հաստատուել էր վերջնականապէս այն կարծիքը, թէ «հակառակ կարծիքներով և բնազդումներով ներշնչած մի տղայ է, բթամիտ և ծոյլ»:

Վերջին երկու նկատումների դէմ, որոնց մասին գիտէր, մաքառում էր, ինչպէս խեղդուողը ալիքի դէմ,—կատաղի, բայց ապարդիւն կերպով:

Վերջ ի վերջոյ կորցրեց ամեն հաւատ դէպի ինքը, ամեն վստահութիւն սեպհական ոյժերի վրայ. հասաւ այն համոզմունքին, որ ջանքերն ու աշխատութիւնը զուր են, որ պէտք է վատ սովորի, և միաժամանակ երեակայում էր իրան, ի՞նչ կ'սսի այս բանի վրայ մայրիկը, ի՞նչ ցաւ կը լինի նրա համար այս, ի՞նչպէս կարող է այս նրա առողջութիւնը խորտակել:

Չալսինի քահանան, որ երբեմն նամակներ էր գրում նրան, մի շատ քաղցրաբարոյ, բայց անշրջանկատ մարդ, ամեն գիրը վերջացնում էր խօսքերով:

«Միխայ, յիշիր միշտ, որ մայրիկիդ ոչ միայն ուրախութիւնը, այլ և առողջութիւնը կախուած է քո առաջադիմութիւնից ուսման ու բարոյականութեան մէջ»: Յիշում էր, յիշում էր, մինչև անգամ չափից դուրս յիշում, որովհետեւ նոյն իսկ երազի մէջ կրկնում էր ողբալի ձայնով. «Մայրիկ, մայրիկ»,—կարծես նրանից թողութիւն էր ադերսում:

Իսկ արթուն ժամանակ ստանում էր աւելի ու աւելի վատ թուանշաններ: Մինչ այդ՝ Գրիստոսի Ծնունդը արագ մօտենում էր և ինչ վերաբերում էր երկամսեակին, անկարելի էր մոլորուել: Գրեցի պանի Մարիային, կամենալով այս առիթով նրան նախազգուշացնել: Բացարձակ և հաստատ կերպով ասացի, որ երեխան թոյլ է և ծանրաբեռնուած, որ, հակառակ իր անչափ աշխատասիրութեան, չէ կարողանում գլուխը դուրս բերել և որ հաւանական է սօճներից յետոյ հարկաւոր կը լինի նրան ուսումնարանից վերցնել պահել, գիւղում ու նախ և առաջ ամ-

բացնել նրա առողջութիւնը: Թէև պատասխանից զգացի, որ մայրական ինքնասիրութիւնը մի փոքր խոցուած է, այնուամենայնիւ գրում էր, որպէս խելացի մի կին և սիրող մայր: Չասացի Միխայիլն ոչինչ այս նամակի մասին և որ մտադիր ենք իրան ուսումնարանից հանելու, որովհետև խոյս էի տալիս նրան որ և է սատարի յուզմունք պատճառելուց. յիշեցի միայն, թէ՛ ինչ էլ որ լինի, մայրիկը գիտէ որ աշխատում է, և կը կարողանայ հասկանալ որդու անաջողութիւնը: Այս բանը ակներև թեթևութիւն^ա պատճառեց նրան, որովհետև երկար ու աղիւղորմ լաց եղաւ, մի բան, որ մի յայտնի ժամանակից ի վեր չէր պատահել: Լաց լինելիս, կրկնում էր. «Ո՞րքան կսկիծ եմ պատճառում մօրս»: Սակայն մտածելով, որ շուտով գնալու է գիւղը, որ տեսնելու^ա է մօրը, և փոքրիկ Լօլեային, և Ջալիսին, և քահանայ Մաշինսկուն, ժպտում էր արտասուքի միջից: Ես էլ նոյնպէս շտապում էի Ջալիսին, որովհետև արդէն բոլորովին չէի կարողանում տանել երեխայի տխրութիւնը: Այնտեղ նրան սպասում էր մօր սիրար, և մարդկանց քաղցրութիւնը, և խաղաղութիւնը, և հանգստութիւնը: Այնտեղ ուսումը նրա համար ունենալու էր հարազատ ու գրաւիչ, ոչ թէ օտար ու ետ մըղող կերպարանք, այնտեղ ամբողջ միջնորդութեամբ հաբաղատ էր ու մաքուր, և նրանով մանկական կուրծքը կարող էր լի շունչ քաշել:

Ուստի սպասում էի նրա համար տօներին, որպէս փրկութեան՝ և մասներով համաբուծ էի բուզները, որոնք մեզ նրանցից բաժանում էին և որոնք Միխայիլն օրէցօր աւելի վիշտ էին բերում: Թւում էր թէ ամենը նրա դէմ էր երդուել: Միխայիլն, որպէս թէ ուրիշներին անբարոյականացնող, կրկին հրապարակական յանդիմանութիւն ստացաւ: Այս բանը արդէն գրեթէ հէնց տօներից առաջ էր, ուստի առաւել ևս մեծ նշանակութիւն ունեցաւ: Թէ ինչպէս ինքնասէր ու գիւրազգաց երեխան վերաբերուեց այս պատահարին, յանձն չեմ առնում նկարագրել. ինչ խառնչութիւն պիտի ստեղծուէր նրա գլխի մէջ: Պատահապատահ էր լինում ամեն բան նրա մանկական կրծքի մէջ ու իր աչքերի առջև նա՞ տեսնում էր, լոյսի փոխաբէն՝ խաւար: Թեքում էր, որպէս համը քամուց: Վերջը այս տասնամեկամեայ երեխայի դէմքն ընդունեց ուղղակի ողբերգական արտայայտութիւն. այնպիսի երես ունէր, կարծես լացը շարունակ խեղդում էր նրա կոկորդը և կարծես բռնի զսպում էր հեկեկանքը. երբեմն նրա աչքերը նայում էին հիւանդ թուջնակի աչքերի պէս, ապա նրան տիրեց տարօրինակ մի մտախոհութիւն ու քնածութիւն. նրա շարժումները կարծես անգիտակցական

դառան, իսկ ձայնը դարձանալի դանդաղ: Եղաւ անսովոր կերպով խաղաղ, հանգիստ ու մեքենայաբար հնազանդ: Երբ իրան ասում էի, որ ժամանակ է դրոսանքի գնալու, առաջուայ պէս չէր հակառակում, այլ վերցնում էր գզակը և հետևում էր լուռ ու մունջ: Մինչև անգամ գոհ կը լինէի, եթէ այս մի անտարբերութիւն լինէր, բայց տեսնում էի, որ անտարբերութեան դիմակի տակ ծածկուած է լարուած, ցաւագար ինքնուրացում: Նստում էր դասերի, պատրաստում էր տուածը առաջուայ պէս, բայց արդէն աւելի ըստ սովորութեան: Երևում էր, որ մեքենայաբար կրկնելով խոնարհումները, մտածում էր մի ուրիշ բանի մասին, կամ աւելի ճիշտ՝ ոչնչի մասին չէր մտածում: Մէկ անգամ, երբ իրան հարցրի, արդեօք արդէն բոլորը վերջացրել է, պատասխանեց ինձ իր դանդաղ և կարծես քնաթաթախ ձայնով՝ «Կարծում եմ, պան, որ ամենը ի դուր է»: Վախենում էի մինչև անգամ յիշել նրա ներկայութեանը մօր անունը, դառնութեան այն բաժակը չը լցնելու համար, որից խմում էին նրա մանկական շրթունքները:

Օրէցօր աւելի էի անհանգստանում նրա առողջութեան համար, որովհետև անդադար նիհարում և վերջը դառաւ իսկ որ ուրուականի նման: Նուրբ երակների ցանցը՝ որ առաջ երևում էր քունքերին, երբ շատ էր յուզւում կամ ոգևորւում, աժամ նկատւում էր շարունակ: Գեղեցկացաւ այն աստիճան, որ դառաւ բոլորովին մի տեսակ սուրբ պատկերի նման: Մարդու սիրտը մղկտում էր այս մանկական, կիսով չափ հրեշտակային գլխին նայելիս, որ թառամող ծաղիկի տպաւորութիւն էր թողնում: Արտաբնուտ կարծես ոչինչ չունէր, բայց մարում էր և ոյժերը կորցնում: Չէր կարողանում արդէն բոլոր գրքերը կրել իր պալուսակում, ուստի մէջն էի դնում միայն մի քանիսը, մնացածը ինքս էի վերցնում, որովհետև այժմ ամեն օր ինքս էի տանում ու բերում դպրոցից:

Տօները վերջապէս վրայ հասան: Զալստինից եկած ձիերը երկու օր է, որ սպասում էին, իսկ պանի Մարիայի նաժակը, որ նրանց հետ միասին եկաւ, յայտնում էր, որ այնտեղ մեզ ամենքն սպասում են անհամբեր: «Լսել եմ, որ, Միխայ, գործերդ ծանր են գնում,—վերջացնում էր պանի Մարիան,—արդէն դեբազանցների յոյսը կտրել եմ. կ'ուզէի միայն որ քո ուսուցիչներդ էլ այնպէս մտածէին, որպէս ես, որ ինչ որ ոյժերդ պատում էին բոլորը արել ես և որ լաւ վարքով աշխատում էիր լրացնել անբաւարար առաջադիմութիւնը»:

Բայց ուսուցիչները ամեն կողմից այլ կերպ էին մտածում, ուստի երկրորդականը ի դերն հանեց և այս յոյսը: Վերջին հրապա-

բակլական յանդիմանութիւնը վերաբերում էր ուղղակի տղայի վարքին, որի մասին պանի Մարիան նոյնպէս հիանալի կարծիք ունէր: Գերմանական ուսուցիչների աչքում այն երկխան միայն իրան լաւ էր պահում, որ ծիծաղով էր պատասխանում նրանց՝ «լեհական ետաճանցութեան», լեզուի ու աւանդութիւնների ծաղր ու ծանակ անելուն: Այսպիսի բարոյագիտական հասկացողութիւնների չորհրդիւ, Միխայիլ, որպէս այնպիսի մէկը, որ յոյս չէր տալիս, թէ ապագայում կարող կը լինի արդիւնաւոր կերպով լսել դատաւութիւնը, և որ իզուր ուրիշներից տեղ էր խլում, արձակուած էր դպրոցից: Այս դատաւճիտը բերեց երեկոյեան դէմ: Սենսակում արդէն գրեթէ մութ էր, որովհետեւ դուրսը շատ խիտ ձիւն էր գալիս, և այս պատճառով չը կարողացայ երեխայի երեսը դնել: Տեսայ միայն, որ դնաց դէպի պատուհանը, կանգնեց նրա մէջ և անմիտ հայեացքով լուռ նայում էր ձիւնի փաթիլներին, որոնք պտտւում էին օդի մէջ: Չէի նախանձում խեղճի մտածողութիւններին, որոնք այն փաթիլներին պէս պէտք է որ պտտուելիս լինէին նրա գլխի մէջ, և աւելի լաւ էի համարում չը խօսել հետը երկամեակի ու վճռի մասին: Այս կերպով անցաւ մի քառորդ ժամ ծանր լուծեան մէջ, որի միջոցին գրեթէ բոլորովին մթնեց: Պատրաստուեցի իրերը դարստեղու անդուկի մէջ, բայց տեսնելով, որ Միխայիլ շարունակ կանգնած է պատուհանի մօտ, վերջապէս ստացի.

— Ի՞նչ ես անում, Միխայիլ:

— Ճշմարիտ է, — պատասխանեց մի ձայնով, որ դողում էր ու կանգ էր առնում ամեն մի վանկի վրայ, — մայրիկը այժմ նստած է Լօլիայի հետ կանաչ առանձնասենեակում կրակի առջև և իմ մասին է մտածում:

— Գուցէ ճշմարիտ է: Ի՞նչու է ձայնդ այդպէս դողում, հիւանդ հօ չեա:

— Ոչինչ չունեմ, պան, միայն թէ սաստիկ մրսում եմ:

Շորերը հանեցի և իսկոյն պառկեցրի անկողնի մէջ, իսկ հանելիս, կարեկցութեամբ տեսայ նրա նիհարացած ծնկներն ու եղեգնու ցողունի պէս բարակ թևերը, թէյ խմեցրի ու ծածկեցի ինչով որ կարելի էր:

— Մի փոքր տաքացնի:

— Այո՛, գլուխս մի փոքր ցաւում է:

Խեղճ գլխիկ, ցաւելու պատճառ ունէր: Տանջուած երեխան շուտով քուն մտաւ և ծանր չունչ էր քաշում քնի մէջ իր նկզ կրծքով, իսկ ես վերջացրի նրա և իմ իրերի դարսելը, յետոյ, որովհետեւ ինքս էլ ինձ անառողջ էի զգում, իսկոյն պառկեցի: Հանգցնելով մօռը, քնեցի գրեթէ նոյն վայրկեանին:

Կէս գիշերին, մօտ ժամի երեքին, զարթեցրեց ինձ լոյսն ու միակերպ՝ ինձ լաւ ծանօթ մըթմըթոցը։ Աչքերս բաց արի, ու սիրտս անհանգիստ սկսեց բարախել։ Սեղանի վրայ վառուած էր լամպը, իսկ սեղանի առջև բաց արած գրքերի վրայ կոացած նստած էր Միխայիլ միայն շապկանց։ Նրա այտերը այլուում էին, աչքերը կիսով չափ փակուած էին՝ կարծես յիշողութիւնն աւելի լարելու համար, գլուխը մի փոքր ետ էր ձգուած, իսկ քնատար ձայնը կրկնում էր։

—Conjunctivus. Amem, ames, amet, amemus, ametis...

—Միխայիլ։

—Conjunctivus. Amem, ames...

Բռնեցի նրա ուսից։

—Միխայիլ։

Զարթնեց ու սկսեց աչքերը թարթել զարմացած, այնպէս նայելով ինձ վրայ, կարծես չէր ճանաչում։

—Ի՞նչ ես անում։ Ընչ է, տղաս։

—Պան, —պատասխանեց, ժպտալով, —կրկնում եմ ամենը սկզբից. վաղը պէտք է գերազանց ստանամ։

Առայ նրան թեկերիս մէջ ու տարայ անկողին։ Նրա մարմինն ինձ այրում էր կրակի պէս։ Բարեբախտաբար բժիշկը կենում էր հէնց մինեւոյն տան մէջ, ուստի իսկոյն հրաւիրեցի նրան։ Մի բոպէ ձեռքում պահեց երեխայի զարկերակը, յետոյ ափը դրեց նրա ճակատին, —Միխայիլ ուղեղի բորբոքում ունէր։

Ա՛հ, երեւի շատ բաներ չէին կարողացել նրա գլխում տեղաւորուել։

Տկարութիւնը արագ ընդունեց անհանգստացնող ծաւալ։ Հեռագրեցի պանի Մարիային և միւս օրը նախասենեակում սաստիկ քաշած զանգը յայտնեց ինձ նրա գալուստը։ Եւ իրաւ, բաց անելով դուռը, տեսայ նրան քաթանի պէս գունատուած, սև քօղը ձգած։ Նրա մատները անսովոր ուժով յենուեցին իմ ուսին, և ամբողջ հօգին դուրս ցցուեց ինձ վրայ յառած աչքերի մէջ, երբ կարճ խօսքերով հարցրեց։

—Կենդանի է։

—Այո՛։ Բժիշկն ասում է որ աւելի լաւ է։

Ետ քաշեց քօղը, որի վրայ նստել էր չնչառութեան և ղեամբ, և ներս վազեց երեխայի սենեակը։ Խաբում էի։ Միխայիլ իրաւ որ կենդանի էր, բայց աւելի լաւ չէր։ Չը ճանաչեց մինչև անգամ մօրը, երբ սա կողքին նստեց և ձեռքը բռնեց։ Միայն երբ գլխի վրայ թարմ սառուց դրի, սկսեց թերթերունքները թարթել և ուշի ուշով զննել իր վրայ կոացած դէմքը։ Ակններն էր

որ նրա միտքը լարւում էր, մաքառելով տաքութեան և խելացնորութեան դէմ, իսկ վերջը նրա շրթունքները շնչացին.

— Մայրիկ...

Մայրը բռնեց նրա երկու ձեռներէն և նստած մնաց այսպէս նրա կողքին մի քանի ժամ, վրայից չը ձգելով նոյն իսկ ճանապարհի զգեստը: Միայն երբ այս բանի վրայ նրա ուշադրութիւնը դարձրի, ասաց.

— Ճշմարիտ որ. մոռացայ գլխարկս հանել:

Երբ գլխարկը հանեց, սիրտս ճմուռեց տարօրինակ զգացմունքից. ահա այս երիտասարդ, գեղանի գլուխը զարդարող չէկ մազերի մէջ խիտ-խիտ փայլում էին արծաթէ թելեր: Երեք օր առաջ գուցէ նրանք այնտեղ չը կային:

Այժմ ինքն էր փոխում տղայի սառուցը և դեղերը տալիս: Միխաւը հտիւց աչքերն էր ման ածում, ուր էլ որ շարժւում էր, բայց նորից նրան չէր ճանաչում: Երեկոյեան տաքութիւնը սաստկացաւ: Զառանցանքի մէջ կարդում էր ժօլկեակու «Եղեգն-երգը» Նեմցեի ռոմանտիկներից, երբեմն խօսում էր գերմաներէն լեզուով, մէկ էլ հոլովում խոնարհում էր զանազան լատինական բառեր: Ամեն բառէ գուրս էին փախչում սենեակից, որովհետեւ չէին կարողանում այս բոլորին ականջ դնել: Երբ դու առողջ էր, ծածուկ սովորել էր ministrantur *), կամենալով մօրը յանկարծակիի բերել, երբ պիտի գնար գիւղը. — և այժմ մարմինս փշաքաղւում էր, երբ գիշերային խաղաղութեան մէջ լրտւում էի այս տասնեմէկամեայ երեխային մահից առաջ միակերպ, հանգչող ձայնով կրկնելիս. Deus meus, quare me repulisti et quare tristis incedo, dum affligit me inimicus **)

Չեմ կարող ասել, որպիսի ողբերգական տպաւորութիւն էին անում այս խօսքերը: Քրիստոսի Ծննդեան նախատօնակն էր: Փողոցից մեր ականջներին էր հասնում մարդկանց աղմուկն, աղաղակը և սահնակների բոփօմների զնգզնգոցը: Քաղաքը ստանում էր տօնական և ուրախ կերպարանք: Երբ բոլորովին մութնեց, պատուհանի միջով փողոցի միւս կողմից երևում էր վառած մոմերով պսպղող մի տօնածառ, որի վրայ կախոտուած էին ոսկեգօծ ու արծաթաղօծ փայլուն ընկուզներ, իսկ ծառի շուրջը սպիտակ և թուխ մանկական գլխներ, օգի մէջ ծածանուող զանգուրներով, թռչկոտում էին կարծես զսպանակների վրայ:

*) Պատարագից առաջ կարդացուող աղօթք, նոյնպէս պատասխաններ, որ դասից տրւում են պատարագչին:

**) Տէր Աստուած, ի՞նչու մերժեցիր ինձ և ի՞նչու տխուր չըլում եմ, մինչդեռ թշնամին ինձ մօտենում է:

Պատուհանները չողջողում էին լոյսից, իսկ ամբողջ ներսը հընչում էր ուրախութեան ու զարմանքի բացակասութիւններից: Փողոցից համեող ձայների^{*)} մէջ բացի ուրախ ձայներից ուրիշ ոչինչ չը կար, և ուրախութիւնն ընդհանուր էր դառնում: միայն մեր փոքրիկն էր, որ կրկնում էր, կարծես մեծ կակիժով. Deus meus, Deus meus, quare me repulisti? Դարպասի մօտ կանգ առան տղաներ տապանը *) ձեռներին, և շուտով մեզ հասաւ նրանց երգի ձայնը. «Մսուրի մէջն է պառկած, ո՛վ կը վազի, Մանկան փառքը երգելու են»: Ծննդեան գիշերը մօտենում էր, իսկ մենք դողում էինք, չը լինի թէ դա մահուան գիշեր լինի:

Մի բոպէ սակայն թւում էր մեզ, թէ տղան ուշքի է եկել, որովհետեւ սկսեց կանչել Լօլեային և մայրիկին, բայց այս կարճ տեւեց: Նրա արագ շնչառութիւնը երբեմն բուրբուլյն կը տրւում էր: Այլևս ինքնախաբէութեան համար տեղ չէր մնում: Այս փոքրիկ հոգին արդէն միայն կիսով չափ էր մեզ մօտ: Նրա հոգին արդէն թռել էր, իսկ այժմ ահա ինքն էլ հեռանում էր դէպի մի ինչ որ խաւար անդորրութիւն ու յաւիտենականութիւն, և արդէն ոչ ոքին չէր տեսնում և ոչինչ չէր զգում, նոյն իսկ չէր զգում մօր գլուխը, որը մեռածի պէս ընկած էր նրա ոտների վրայ: Անտարբեր էր դառել ու արդէն ետ չէր նայում մեզ, նրա կրծքի ամեն շնչառութիւնը հեռացնում էր նրան ու կարծես մտնում խաւարի մէջ: Տկարութիւնը հանգչնում էր կեանքի մէկ կայծը միւսի ետեւից: Նրեխան ձեռները վերմակի վրայ ընկած՝ արդէն գծագրւում էին մեռած իրի ծանր անչարժութեամբ. քիթը սրանում էր, իսկ գէմքն ստանում էր մի ինչ որ սառն լրջութիւն: Շնչառութիւնը աւելի ու աւելի արագանում էր և վերջ ի վերջոյ դառաւ ծխախոտի չլվուցի նման: Մի բոպէ ևս, մի շունչ ևս, ու աւաղի վերջին հատիկը վայր էր թափուելու աւաղէ ժամացոյցից, վերջ էր լինելու:

Կէս գիշերին մօտ հաստատ թւում էր մեզ, թէ արդէն մեռնում է, որովհետեւ սկսեց խոխուղ ու հառաչել, որպէս մի մարդ, որի չթոււնքները ջուրն է կախում, իսկ յետոյ յանկարծ լռեց: Բայց հայելին, որ բժիշկը մօտեցրեց նրա չթոււնքին, ծածկուեց դեռ ևս շնչառութեան գոլորշիով: Մի ժամից յետոյ տաքութիւնը յանկարծ պակասեց. բուրբու կարծում էինք, թէ արդէն փրկուած է: Ինքը բժիշկը մի փոքր յոյս ունեցաւ: Խեղճ պանի Մարիան ուրախութիւնից թուլացաւ:

*) Տապանը մի տնակ է Բրիտտոսի Ծննդեան պատմութիւնը ներկայացնող պատկերներով: Ծննդեան տօներին լեհացի տղաները անէ տուն են պատեցնում տապանը ու տօնը շնորհատրում:

Նրկու ժամուայ ընթացքում նա աւելի ու աւելի լաւա-
նում էր: Առաւօտեան դէմ, որովհետեւ արդէն չորրորդ դիշերն
էր, որ անքուն անց էի կացնում երեխայի անկողնու մօտ, և ու-
րովհետեւ հագս աւելի և աւելի էր ինձ խեղդում, դուրս եկայ
նախասնեակը և, պառկելով խոտէ մահճի վրայ, քուն մտայ:
Ջարթեցրեց ինձ պանի Մարիայի ձայնը: Կարծեցի թէ ինձ է
կանչում, սակայն գիշերային խաղաղութեան մէջ պարզ լսեցի.
«Միխայ, Միխայ»: Մազերը գլխիս վրայ բիզ-բիզ կանգ-
նեցին, երբ հասկացայ այն սարսափելի եղանակը, որով կան-
չում էր երեխային. բայց նախ քան տեղիցս վեր թռչելը, ինքը
դուրս վազեց նախասնեակը, ձեռքով մոմը պաշտպանելով և
ցնցուող շրթուքներով արտասանեց.

— Միխասը... մեռաւ:

Ենչասպառ վազեցի տղայի մահճակալի մօտ: Այգպէս էր:
Գլխի ճնշուածքը բարձի վրայ, բաց շրթուքները, մի կէտին
անշարժ բեռնած աչքերը և լարուած դիմագծերը ամենափոքր
կասկած չէին թողնում: Միխասը մեռած էր:

Ծածկեցի նրան վերմակով, որ մայրը՝ անկողնուց վեր
թռչելով, նրա նիհարած դիակից քարչել էր, ու փակեցի նրա աչ-
քերը, իսկ յետոյ պէտք է սիրտ տայի պանի Մարիային: Տօնի
առաջին օրն անցաւ յուղարկաւորութեան պատրաստութիւնների
մէջ, որոնք ինձ համար մի սարսափելի բան էին, որովհետեւ
մայրը չէր կամենում զիջանել դիակը և շարունակ ուշաթափ էր
լինում: Սիրտը գնաց, երբ եկան դագաղի չափն առնելու, յե-
տոյ՝ երբ սկսեցին դիակը հագցնել, վերջապէս՝ երբ դրին դիա-
սեղանի վրայ: Նրա յուսահատութիւնը ամեն բոլոր հանդիպում
էր յուղարկաւոր ծառաների անտարբերութեան, որոնք ընտելա-
ցած էին այգպիսի տեսարանների, և փոխուում էր գրկից խե-
լագարութեան: Ինքը փռում էր տաշեղը դագաղի մէջ մետաքսի
տակ, զոռանցելով կարծես տաքութեան մէջ, որ երեխայի գը-
լուխը շատ ցածր կը լինի: Իսկ Միխասը այդ միջոցին պառկած
էր մահճակալի վրայ, արդէն նոր չքաղցեստն ու սպիտակ ձեռ-
նոցները հագին, ձգուած, անտարբեր ու պայծառ:

Դրինք վերջապէս մարմինը դագաղի մէջ և տեղաւորեցինք
դիակասեղանի վրայ, իսկ շուրջը երկու շարք մոմեր: Սնեակը,
որի մէջ խեղճ երեխան այնքան լատինական խօսքեր էր հղովկել
ու խոնարհել և դասեր սերտել, կարծես մատուռի փոխուեց, ու-
րովհետեւ փակուած փեղկերը ներս չէին թողնում ցերեկուայ
շողը, իսկ մոմերի դեղին աղօտ լոյսը տալիս էր պատերին մի
ինչ որ եկեղեցական ու հանդիսաւոր տեսք: Նրբէք, այն ժամա-
նակից ի վեր, երբ ստացել էր վերջին գերազանցները, չէի տե-

սել Միխայիլի դէմքը այսչափ պայծառացած. նրա նուրբ կիսադէմքը, առաստաղին դարձրած, քաղցր ժպտում էր, կարծես տղան ակործում էր մահուան այդ ներգործութիւնից ու իրան բախտաւոր էր զգում: Լոյսի պսպղոցը նրա դէմքին ու այդ ժպտին տալիս էին կեանքի ու քնի կերպարանք: Կամաց-կամաց սկսեցին հաւաքուել նրա ընկեր տղաները, որոնք քաղաքից չէին մեկնել տօներին:

Երեսնաների աչքերը լայնանում էին զարմանքից, տեսնելով մոմերը, դիասեղանն ու դազաղը: Գուցէ այդ փոքրիկներին զարմացնում էր դասընկերոջ լրջութիւնն ու դերը: Ահա դեռ նոր իրանց մէջն էր, իրանց պէս մէջքը ծռում էր գերմաներէն գրքերով լցրած պայուսակի ծանրութեան տակ, ստանում էր վատ թուանշաններ, ենթարկւում էր նախատինքների ու հասարակական յանդիմանութիւնների, իրանցից ամեն մէկը կարող էր քաշել նրա մազերից կամ ականջից, իսկ այժմ պառկած էր այնչափ իրանցից բարձր, հանդիսաւոր, հանգիստ ու լոյսով պատած: Բոլորն էլ մօտենում էին նրան պատկառանքով ու մի տեսակ շփոթութեամբ—և նոյն իսկ Ուիլիսին, այն առաջին աշակերտը, ոչինչ էր նրա առջև: Տղաները միմեանց թև հրելով, փափում էին իրար մէջ, որ նա այժմ ոչնչի հոգ չունի, որ եթէ մինչև անգամ Herr Inspector-ը դար, նա այլ ևս տեղից վեր չէր թռչել, չէր սարսափել, այլ կը ժպտար հէնց այսպէս հանգիստ—որ նա այնտեղ բոլորովին, բոլորովին կարող է անել այն, ինչ որ իրան հաճելի է, աղմուկ բարձրացնել, որչափ սիրտն ուզում է, և խօսել փոքրիկ թևաւոր հրեշտակների հետ:

Այսպէս չնշարով, մօտենում էին մոմերի շարքին և «Հոգեոցն հանգուցելոց» էին ասում Միխայիլն:

Յաջորդ օրը ծածկը դրին դազաղի վրայ, բեկեղեցին մեխերով ու տարան գերեզմանատուն, ուր ձիւնի հետ խառնուած աւազէ կոշտերը շուտով ծածկեցին նրան իմ աչքերից... յաւիտեան:

Այժմ, երբ այս գրում եմ, անցել է արդէն այդ ժամանակից մօտ մի տարի, բայց յիշում եմ քեզ ու խղճում եմ քեզ, իմ փոքրիկ Միխայիլ, իմ վաղաթառամ ծաղիկս: Չը գիտեմ, ուր ես, լսում ես արդեօք ինձ. գիտեմ միայն, որ քո առաջուայ ուսուցիչը օրէց օր աւելի է հազում, որ նրա սիրտը օրէց օր աւելի է ծանրութիւն զգում ու մենակութիւն, որ գուցէ նա էլ չուտով հեռանայ, ինչպէս դու հեռացար...

Թարգմ. լեհերէնից ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆ